ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԲՀԿ, 2023 թ.

Մնացորդ առ 01.01.2023 թ. դրությամբ՝ 2.826.433 դր.

2022 թվականին կազմակերպությունը ստացել է ֆինանսական աջակցություն 37.308.932 դրամի չափով:

Ծախսեր.

Աշխատավարձ՝ ներառյալ հարկեր – 5.836.166 դր.

Գործառական այլ ծախսեր –30.008.932 դր.

Ընդամենը — 35.845.098 դր.

Մնացորդ՝ 01.01. 2024-դրությամբ՝ 4.290.267 դր.

Երևանի Զարգացման կենտրոն

Կենտրոն են այցելում սոց. անապահով, ծնողազուրկ, բռնության ենթարկված երեխաները և նրանց մայրերը: Կենտրոնում գործում են համակարգչային դասընթացների, պարի, նկարչության, թատերական, օտար լեզուների՝ անգլերեն և ռուսերեն, քանդակագործության, հուլունքագործության խմբակները: Էթիկա է դասավանդվում մայրիկներին և միջին ու ավագ խմբի երեխաներին: Երեխաները զբաղվում են նաև սպորտով: Ծնողների համար կազմակերպվում են մարզման կուրսեր ու դասընթացներ: Կազմակերպվել են երեխաների և նրանց խնամակալների ստեղծագործական միտքը ներկայացնող ցուցահանդեսներ՝ «Արտասովոր պայուսակներ», «Արտասովոր գուլպաներ», «Արտասովոր ու համեղ տորթեր», «Արտասովոր անձրևանոցներ /զոնթիկներ»: Կազմակերպվել են գրական երեկոներ՝ մայրիկները ներկայացրել են հեղինակին բանաստեղծությունները:

Կազմակերպվել են սպորտային խաղեր, վիկտորինաներ, այցելություններ մշակութային կենտրոններ, էքսկուրսիաներ:

2. Ստեփանավանի Զարգացման կենտրոն

Կենտրոն են այցելում ք. Ստեփանավանի, Գյուլագարակ, Ուռուտ, Կուռթան գյուղերի սոց. անապահով երեխաները: Կենտրոնում գործում են պարի, նկարչության, թատերական, օտար լեզուների, շախմատի, ձեռքի աշխատանքի խմբակները: Կազմակերպվել են սպորտային խաղեր, վիկտորինաներ, ճամբարներ, թատերական ներկայացումներ, այցելություն Երևան՝ ծանոթություն Երևանի Զարգացման կենտրոնի երեխաների ու նրանց գործունեության հետ:

3. Արագածավանի Զարգացման կենտրոն

Կենտրոն են այցելում են Արագածավանի և հարակից գյուղերի երեխաները: Կենտրոնում գործում են նկարչության, կավագործության, գորգագործության, թատերական, վոլեյբոլի, թենիսի, ֆուտբոլի խմբակները: Կազմակերպվել են ճամբարներ, միջոցառուներ, սպորտային խաղեր, թատերական ներկայացումներ, այցելություն Երևան՝ մանկական ժամանցային կենտրոններ:

4. Ճամբարակի Զարգացման կենտրոն

Կենտրոն են այցելում Ճամբարակի և Մարտունի գյուղերի երեխաները: Կենտրոնում գործում են նկարչության, թատերական, շախմատի խմբակները: Անցկացվում են նաև դասապատրաստումներ: Կազմակերպվել են ճամբարներ, միջոցառուներ, սպորտային խաղեր, թատերական ներկայացումներ:

5. Օգնություն սահմանափակ կարողություն ունեցող մարդկանց Կազմակերպվել են սիստեմատիկ այցելություններ, տոնական միջոցառումներ, ինչպես նաև էքսկուրսիաներ՝ քաղաքից դուրս:

6. Ամսական նպաստի տրամադրում ծնողազուրկ երեխաներին, սահմանափակ կարողություն ունեցող մարդկանց, որբեվարիներին:

7. Օգնություն սոց. անապահով ընտանիքներին: Տրամադրվել են ֆինանսական և սննդի օգնություն, ինչպես նաև՝ կենցաղային ապրանքներ և օգտագործված կահույք:

Տնօրեն՝ Գ. Հակոբյան

18.03.2024 թ.